ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Բաղրամյան 19,
Հեռ. 011513-288

13 մարտի 2019 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն Տ. ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի, Ձեզ եմ ներկայացնում 2019 թվականի մարտի 11-ին շրջանառության մեջ դրված և անհետաձգելի համարվող <<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի (*Կ-057-11.03.2019-ԱՍ-011/0*) ***նախնական քննարկման*** համար հետևյալ առաջարկությունը.

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ
ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ	«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ(*Կ-057-11.03.2019-ԱՍ-011/0*)	Նախատեսել դրույթներ գործող օրենքի 55-րդ հոդվածում՝ նախագծով առաջարկվող փոփոխությունների արդյունքում կենսաթոշակի և նպաստի չափերը 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց համար համապատասխանաբար 40 և 20 տոկոս հավելումներով ապահովելու մասին: ***Հիմնավորում:*** Նախագծի առաջարկվող խմբագրմամբ ընդունման արդյունքում 1-ին, 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց կենսաթոշակի և նպաստի չափերը կհավասարեցվեն, որով կխախտվի մեր կողմից վավերացված կոնվենցիաներով պահանջվող արդարության սկզբունքը և բացի դրանից, կիմաստազրկվի բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող ծառայության գործառույթը՝ հաշմանդամության խումբ որոշելու իմաստով:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ **ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ**